

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹՅՈՒՆ, ՀՈՎՀԱՆՆՍ ՍԱՆԴՂԱԿԱՆՆՑԻ,
կազմեց, առաջաբանը և ծանոթագրությունները գրեց **Տ. Ա. Իզմայլովան,**
Երևան, «Սովետական գրող» հրատարակչություն, 1986, հայ., ռուս., ֆրանս.
լեզուներով, 160 էջ, 38 պատկեր, 52 տախտակ:

Մաշտոցի անվան մատենադարանի պատվերով «Սովետական գրող» հրատարակչությունը լույս է բերում «Հովհաննես Սանդղկավանեցի» աքրոմը, որը լրացնում է հայ մանրանկարչության գանձերին նվիրված արդեն հայտնի ուսումնասիրությունների շարքը:

Գրքի հեղինակն է հայ միջնադարյան արվեստի անվանի գիտակ. Լեհինգրադի Էմիտաժի ակադ գիտաշխատող, արվեստագիտության դոկտոր Տ. Ա. Իզմայլովան:

Այրուր բնագրվում է Մաշտոցի անվան մատենադարանում պահվող 11-րդ դարի երեք նշանավոր ձեռագրերի մանրանկարների բնությունը: Այդ երեք մատյաններից առաջինը 1053 թ. ավետարանն է (ձև. 3793), մյուսը, այսպես կոչված, Քեզյունց ավետարանը (ձև. 10099), որի ձևավորման աշխատանքները ավարտվել են 1060 թ., իսկ երրորդը՝ Մոզնու ավետարանը (ձև. 7736), որն ամենայն հավանականությամբ ստեղծվել է 11-րդ դարի վերջին տասնամյակներում: Վերջինս գեղագանցում է մյուս երկու մատյաններին և՛ իր պահպանվածությամբ, և՛ գեղարվեստական կատարումով: Ելնելով երեք ձեռագրերի նկարազարդումների աղբյուրներից, Տ. Ա. Իզմայլովան այս հուշարձանները համարում է ոչ միայն միևնույն դրպրոցի արտադրանք, այլև նույն ժողովրդի աշխատանք:

«Հովհաննես Սանդղկավանեցի» աքրոմի ծրնունը նախապատրաստվել է հայ արվեստի անվանի ուսումնասիրողներ Գ. Հովսեփյանի, Ս. Տեր-Ներսեսյանի, Ա. Սվիրիճի, Լ. Ա. Գուտեռովոյի և այլ գիտնականների աշխատություններով: Բացի այդ, Տ. Ա. Իզմայլովայի ռուսերեն ու ֆրանսերեն տպված հոդվածներով և «11-րդ դարի հայ մանրանկարչությունը» գրքով, որը 1979 թ. հրատարակվել է Մոսկվայում ռուսերեն լեզվով, գիտական շրջաններին հայտնի է դարձել էրենվոզ ձեռագրերի պատկերների մանրակրիտ վերլուծությունը:

Այս աքրոմը նախատեսված է ոչ միայն մասնագետների, այլև բեթերգողների լայն շրջանակների համար և առաջին անգամ արվեստասեր հասարակայնությանն է ներկայացնում Հովհաննես Սանդղկավանեցու բոլոր պահպանված ձևա-

վորումները՝ գունավոր վերատպություններով:

Ըստ 1053 թ. և Քեզյունց ավետարանների հիշատակարանների. այս ձեռագրերը բնորոշակվել են Շիրակին բանմանակից Աշարունյաց գավառում, այսինքն Բագրատունյաց բագավորության սահմաններում: 1045 թ. բյուզանդացիների՝ Անին գրավելուց և Բագրատունյաց իշխանության վերացումից հետո ստեղծված հիշյալ մատյանները մեզ են հասցնում հայոց պետականության շրջանում ծաղկած Անիի գրարվեստի ավանդույթները: Դրանք այս դպրոցից հրաշքով փրկված եզակի մասունքներ են: Տ. Ա. Իզմայլովան յուրաքանչյուրն գտնում է, որ բնեկող երեք ավետարաններից բացի նույն ժամանակաշրջանի և տարածքի «մանրանկարչական արվեստի մասին գրեթե ոչինչ հայտնի չէ»: Ձեռագրերի մեծ շափերը, սպիտակ բնութր մազադաթի վա երկաթագրով շարադրված հրատակ բնագիրը, մանրանկարների ազնիվ ուր և շեղությունը, գիտնականի կարծիքով, վկայում են «հասարակության բարձր խավերի» պահանջների ու նշանակի արտացոլման մասին:

1053 թ. ավետարանի գլխավոր հիշատակարանում հանդիպում են ոչ միայն մատյանի ծննդավայրի՝ «Վանս Սանդղկայ» անունը, այլև գրչի՝ Հովհաննեսի, ոսկեղջրը պատրաստող Հովհաննեսի, մազադաթը շինող Մովսեսի, պատկերները ոսկով զարդարող Թորոս հաղբակեցու, նաև գաղտնագրով բերված ոմն Դավթի և Մարիամի անունները:

Տարբեր, այսֆան շառ արհեստավորների հիշատակությունից երևում է, որ Սանդղկավաները եղել է գրչության մեծ կենտրոն: Նկարչի անվան բացակայությունը հուշում է, որ գրչի Հովհաննեսը միաժամանակ և ձեռագրի ծաղկողն է: Նրա և Դավթի հիշատակությունը Քեզյունց և Մոզնու ավետարանների էջերում բույլ է տալիս անմիջականորեն միմյանց կամրջել երեք մատյանները:

Քեզյունց ավետարանում նշվում է և Ջորամայր (կամ Մայրաձոր) վանքը, որը գտնվում էր Կաղզվանի մոտ, Աշարունյաց գավառում: Տ. Ա. Իզմայլովան կարծում է, որ այս տարածում է եղել Սանդղկավանքը: Այդտեղ կամ Ջորամայրում կամ նույն շրջանի մեկ այլ վանքում

է հավանաբար ստեղծվել է Մոզնու ավետարանը: Վերջինիս 15--17-րդ դարերին վերաբերող հիշատակարանները ցույց են տալիս, որ ձեռագիրը երկար ժամանակ պահվել է Հաղպատի վանքում: Ավելի ուշ այն հայտնվել է Քիֆլիսի Մոզնու եկեղեցում, որտեղից էլ ստացել է իր անվանումը: Գիտնականը հնարավոր է համարում, որ այս մատյանը ընդօրինակվել է ու նկարագրվել 1048—1082 թթ.: Տաշիր-Ձորագետում քաղաքի Քաղաքապետների շատավիդ կյուրիկե Երկրորդի իշխանության տարիներին, երբ մեծացել էր Հաղպատի գերը:

«Հովհաննես Սանդղիլավանցի» այբովի ընթերցումը մեզ համոզում է, որ բնականորեն ավետարանների պատկերները նշանավորում են հայ գրադաստի դպրոցներից մեկի կյանքի տարբեր փուլերը:

Քեզյունց ավետարանի ձևավորումները մյուս երկու ձեռագրերի սահմանակարների համեմատ ակնհայտորեն ավելի հնաոն են: Հիշատակարանի համաձայն դրան սկսել է Ստեփանոս ծաղկողը և ավարտել Հովհաննեսը:

Կա այն կարծիք, որ այս նկարիչների համար նախօրինակ են ծառայել մեզ չհասած 6—7-րդ դարերի ստեղծագործությունները, որոնք կամ դրանց նման պատկերները հիմք են դարձել և 1053 թ. ավետարանի նկարագրումների համար:

Քեզյունց ավետարանի և մյուս երկու մատյանների մեջ հանդիպել է գալիս խորանների նոր տեսակը, որը հետագայում տարածում է զբաղում ողջ հայ գրադաստում:

Կամարանման կառույցների ձևով նախորդ դարերի խորանները վերանում են, որովհետև կամարը ներառվում է ուղղանկյան մեջ: Տ. Ա. Իզմայլովան անուննացնում է այն ընդհանուր գաղափարախոսչերն ու մտքի վերջ, որոնք հանդիպում են երեք ձեռագրերի պատկերներում, հատկապես խորաններում: Նա նշում է նաև Քեզյունց ավետարանի ու 1053 թ. մատյանի ավետարանիչների նկարների նույն պատկերագրությունը:

1053 թ. ավետարանը պահպանված հայկական ամենահին ձեռագիրն է, որտեղ ավետարանիչների պատկերները դիմաց հանդիպում են ձևավորված անվանաթերթերը, այսինքն այստեղ առաջին անգամ արձանագրվում է հետագա դարերի հայ գրադաստում համընդհանուր տարածում գտած ավանդույթը: Մատյանի անվանաթերթերում կարևոր տեղ է զբաղեցնում նակատագրող և մեծատար, որը ծաղկված է տրվյալ ավետարանիչի խորհրդանշանով: Հայ մանրանկարչության այս ավանդական առանձնահատկությունները մատնանշելով, այբովի հեղինակը փաստորեն ցույց է տալիս Քեզյունց ավետարանը ձևավորելուց հետո Հովհաննես Սանդղիլավանցու աշխատեղանակում հայտնվող նոր երևույթները: Քացի այդ, կարելի է պարզաբար տեսնել այդ հուշարձանների բացառիկ կերտորությունը հայ գրադաստի ակունքները ու-

սումնասիրելու տեսակետից:

Հովհաննեսի վարպետությունը իր բարձրակետին է հասնում Մոզնու ավետարանում, որը ըստ Տ. Ա. Իզմայլովայի, հայ մանրանկարչության «մարգարիտներից է»:

Այս մատյանի շեղ խորանները հիացնում են դիտողին գեղարվեստական մոտիվների և զարդերի բազմազանությամբ, իրական ու առասպելական կենդանիների առատությամբ, սյուների նրբագեղությամբ և մեղմ գունաշարով: Աչքի է զարնում, որ այստեղ արտակարգ մեծ է զարդանախշերի փակակառուցումը: Խոսքը վերաբերում է բուսական և կենդանական աշխարհի մոտիվներին: Ավետարանի ձևավորումներում հոյակապ կերպով գույզակցվում են անտիկ աշխարհի արվեստի վերապրուկները, վաղ քրիստոնեական և ավելի ուշ շրջանների ավանդույթները: Ի տարբերություն մյուս երկու մատյանների, այստեղ մեծ տեղ է տրված ոսկու գործածությանը. որոշ դեպքերում ոսկով են ծածկված նույնիսկ խորանների սյուները:

Մոզնու ավետարանը զանազանվում է նախորդներից նաև տեղումնական նկարաշարը ներկայացնող պատկերներով: Վերջիններս փայլուն կերպով արտացոլում են հայ գրադաստի նախորդ դարերի գեղարվեստական փորձը: Իրանց մեջ կարելի է նկատել այնպիսի առանձնահատկություններ, որոնք բնորոշ են միայն հայ գրի նկարագրումն արվեստին:

«Մոզնու ավետարանի տեղումնական մանրանկարների ոճը ապշեցնելով իր տոնական հանդիսավորությամբ, կարողային գեղանկարչության է հիշեցնում»,— գրում է Տ. Ա. Իզմայլովան: Նա իրավացիորեն նշում է, որ այս ձեռագրի ավանդույթները չմոռացվեցին հետագայում և կարևոր դեր խաղացին հաջորդ դարերի հայ գրադաստի նվաճումները նախապատրաստելու առումով: Գիտնականը անկասկած նկատի ունի առաջին հերթին կիրիկյան նկարիչների, հատկապես Քարոս Ռոսլիկի և նրա աշակերտների ժառանգությունը, որը մեծ չափով խառնվում է 11-րդ դարի հայ մանրանկարչությանը և վերաբերվում է իր:

Այս այբովի հայերեն, ռուսերեն, ֆրանսիսերեն լեզուներով տրված էջերումն են ու ծանոթագրությունները գիրքի մատչելի են դարձնում ոչ միայն հայ ընթերցողին, այլև արտասահմանում նրա կիրառությունը ոչ հայախոս միջավայրում:

Խնդրո առարկա հատորը ունի շուրջ 90 սև ու սպիտակ և գունավոր վերապատկերումներ, որոնք ամբողջական զարգափար են տալիս ներկայացվող ձեռագրերի մասին:

Այբովի կան որոշ վրիպակներ. այսպես օրինակ, Մլխե քազունու ավետարանը նշվում է որպես 551 թ. աշխատանք (չ է 8, 18, 27), մինչդեռ այն ստեղծվել է 862 թ., որոնք չեն նվազեցնում գրքի արժեքը:

Հայ արվեստի անվանի երախտագիր Տ. Ա.

Իզմայիլովայի այս նոր հատորը կարևոր և անհրաժեշտ հրատարակություն է, որը գալիս է իր պատվավոր տեղը զբաղեցնելու ակզարդ գիտ-

նականի շուրջ հարյուրի հասնող հայագիտական երկերի շարքում:

Լ. Բ. ԶՈՒԳԱՍՉՅԱՆ